Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի
11-12-րդ դասարաններ

Տևողությունը՝ 2 ժամ 30 րոպե

Վաղուց ՝ հազարամյակներ առաջ՝ Միջագետքում սփռված էր պերճաշուք Բաբելոնը, ***որ*** ամուր պարիսպներով ու դարպասներով շրջապատված՝ անկախ ու անառիկ էր պահում բյուրավոր բնակիչներ ունեցող քաղաքին: Եփրատի՝ արևելյան բարձրադիր ափում արքայական ուղղանկյուն պալատն էր՝ միջնաբերդի երկնակարկառ ***աշտարակներով,*** որոնք թվում էր՝ իշխում էին շրջակայքի վրա: Սակայն Բաբելոնի զարդը, իրավմամբ, նրա՝ զարմանահրաշ աչք շոյող կախովի այգիներն էին: ***Ըստ Հերոդոտոսի*** ՝ այն հիմնել էր Նաբուգոդոնոսոր արքան՝ իրեն կնոջ՝ մեդիացի թագուհու ձանձրույթը փարատելու: Տեսնելով, որ դշխուհին թախծում է տոթակեզ քաղաքում, վերհիշելով իր զովասուն հայրենիքը, արքան որոշեց անակնկալ մատուցել, նա թագուհուն կնվիրի փարթամ մի պարտեզ՝ նման Մեդիայի ***ծառաստաններին:***

Քառահարկ աշտարակի վրա վառվռուն պարտեզներն ասես ***կախված*** էին օդում: Կանաչազարդ չորսը հարկերը վեհորեն բազմել էին կորնթարդ կամարներին, վերջիններս էլ քառանկյուն մույթերին: Որպեսզի Մեդիայի **պատրանք** ստեղծի, թագավորն աշխարհի տարբեր ծայրերից անգամ բերել տվեց հազար ու մի թփաբույսեր ու հազվագյուտ ծաղիկներ: Ճեմուղու եզրերը պատված էին վարդերով ու նրբաբույր ***եղրևանիներով***, քիչ այն կողմում՝ խոլորձի և մարգարտածաղկի թփերն էին, իսկ դրանց կողքը պչրանքով օրորվող ծփիները:

Դարեր անցան, ու Բաբելոնը ասուպի պես անհետացավ ժամանակի հոլովույթում, և ահեղահոս ջրհեղեղն ***հիմնովին*** կործանեց Նաբուգոդոնոսորի ***կավից*** պատրաստված պալատը, (ի դեպ Բաբելոնում ամբողջ կառույցները կավաշեն էին) նաև հուռթի պարտեզը:

1.Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով կետադրական սխալները, անհրաժեշտ տեղերում լրացնելով բաց թողնված տրոհության նշանները: (5 միավոր)

2. Բնագրից դո՛ւրս գրիր լեզվական սխալներով գործածված բառերն ու բառաձևերը՝ դիմացը գրելով ճիշտ տարբերակը: (4 միավոր)

3. Տեքստից դուրս գրի՛ր տրված բառերին համապատասխանող հոմանիշները՝ ծեքծեքանք, խաբկանք, տարաթույր, յասաման, անընստգյուտ, հենասյուն, ակնահաճո, ոստան: (4 միավոր)

4.Դո՛ւրս գրիր տեքստում գործածված բարդածանցավոր բոլոր բառերը: (5 միավոր)

5.Տեքստից դո՛ւրս գրիր այլ խոսքիմասային արժեք ունեցող 10 բառ՝բոլորի կողքին նշելով խոսքի մասերի անվանումները: (5 միավոր)

6.Նշի՛ր բնագրում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները: (5 միավոր)

7. Ընդգծի՛ր այն գոյականները, որոնց հոգնակին կազմվում է –ներ վերջավորությամբ՝ հողաչափ, տեսակետ, բուժքույր, սպի, որկրամոլ, սկիզբ, ծոցատետր, կարմրախայտ ճառագիր, բաղաձայն, հանքախորշ, ստինք, վերջալույս, փողկապ, տաքդեղ, կայսր, հայցագիր, լրագիր, ընձուղտ, բելոռուս, տոնածառ, լուսանցք, միջնասյուն: (3 միավոր)

8.Կազմի՛ր բնույթով որոշիչ երկրորդականով 4 բարդ ստորադասական նախադասություն՝ որպես կապակցման միջոց կիրառելով **որտեղ, ուր, որքան, երբ** հարաբերական դերանունները: (4 միավոր)

9.Բացատրի՛ր տրված դարձվածքները՝ Պառնասի գագաթը բարձրանալ, Արիադնայի կծիկ, գորդյան հանգույց, Մորփեոսի գիրկն ընկնել, վերջին մոհիկան: (5 միավոր)

10. Գրի՛ր շարադրություն՝ «Ես եմ կերտում իմ ապագան» վերնագրով (երկու էջի սահմաններում): (10 միավոր)